ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. (0267) 2-10-81
berdhamaynq@majl.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 23-Ն

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, ՀՀ օրենքի 7,9,10,11-րդ հոդվածներով, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Բերդի համայնքի 2013 թվականի
1.1. Տեղական տուրքերի դրույքաչափերը համաձայն N 1 հավելվածի:
1.2. Տեղական վճարների դրույքաչափերը համաձայն N 2 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված 1*
*Բերդ համայնքի ավագանու*
*2012 թ. դեկտեմբերի 24-ի*
*N 23-Ն որոշման*

## 2013 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բ) սույն կետի ,,ա,, ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ,,ա,, ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերի՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի

գործառական նշանակության փոփոխություն, ապա, կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է`

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար` 3000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար` 1500 դրամ:

5. Համայնքի տարածքում`
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

5[1]. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50000 դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառ. մետրի տեղական տուրքը սահմանվում է`
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2000 դրամ.

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 3500 դրամ.

գ/ այլ արտաքին գովազդի համար` 1500 դրամ.

դ/ համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների համար` 700 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

8.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

Համայնքի ղեկավար Ս. Մանուչարյան

*Հավելված 2*

*Բերդի համայնքի ավագանու*
*2012 թ. դեկտեմբերի 24-ի*
*N 23-Ն որոշման*

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար սահմանել փոխհատուցման վճար 80000 դրամի չափով:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման այլ աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 2000 դրամի չափով:

3.Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել վճար յուրաքանչյուր մասնակցից 20000 դրամի չափով:

4.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝

1) կենցաղային աղբի համար

ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 120 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ:

5.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ 600 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Քեկի 5, հեռ. (0267) 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 24-Ա

## ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ, 20-րդ կետերով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել գույքի վարձավճարների, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2013 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված*

*Բերդի քաղաքային*
*համայնքի ավագանու*
*2012 թ. դեկտեմբերի 24-ի*
*N 24-Ա որոշման*

## ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Խաղաղ պայմաններում բնակելի շենքերի նկուղները կենցաղային նպատակներով օգտագործելու համար և ավտոտնակների տարածքների համար սահմանվում է տարեկան 100 դրամ՝ 1 քմ համար:

2. Համայնքին պատկանող շենքերի, շինությունների տարածքները վարձակալությամբ տրամադրելու համար սահմանվում է ամսական 500 դրամ՝ 1 քառ. մետրի համար:

3.Մշակույթի տունը վարձակալությամբ օգտագործելու համար սահմանվում է վարձավճար՝ վաճառած տոմսերի 10 %-ի չափով:

4.Մանկական զբոսայգու կարուսելների 1 տոմսի արժեքը սահմանվում է 100 դրամ, թանգարան մուտքի 1 տոմսի արժեքը՝ 50 դրամ:

5. Համայնքի տարածքում մանկապարտեզ, երաժշտական դպրոց, արվեստի դպրոց հաճախող յուրաքանչյուր երեխայի համար վարձավճարը սահմանվում է 1 ամսվա համար՝

ա) մանկապարտեզ - 2000 դրամ.

բ) երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժին - 2000 դրամ.

գ) երաժշտական դպրոցի ջութակի և ժողգործիքների բաժին -1600 դրամ.

դ) արվեստի դպրոց -1600 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5. հեռ. 0267 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 25-Ա

## ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասով

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել Բերդի համայնքի սեփականության 2012 թվականի գույքագրման արդյունքները և դուրս գրման ենթակա գույքի ցուցակը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված

*Բերդի քաղաքային համայնքի ավագանու 2012 թ. դեկտեմբերի 24-ի N 25-Ա որոշման*

# ՑՈՒՑԱԿ

Բերդի համայնքի սեփականությունից դուրս գրման ենթակա գույքի

## ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

| | | |
|---|---|---|
| 1. Տնակ | 1հատ | 22790 |
| 2. Հեռ. ապարատ | 5հատ | 37500 |
| 3. Աթոռ | 2հատ | 22500 |
| 4. Տնկիներ | 50հատ | 50000 |
| 5. Ֆլեշ | 3հատ | 34000 |
| 6. Հաշվիչ մեքենա | 6հատ | 18000 |
| 7. Աթոռ | 20հատ | 9200 |
| Ընդամենը | | 193999 |

Մեկ հարյուր ինսունմերեք հազար ինը հարյուր ինսունինը դրամ

## ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ

| | | | |
|---|---|---|---|
| Լուսարձակ պատի | 1 | 59 | 59 |
| Էլ. ջեռուցիչ | 1 | 13000 | 13000 |
| Ընդամենը | | | 13059 |

Տասներեք հազար հիսունինը դրամ

## ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

| h/h | Անվանումը | Միավորը | Քանակ | Արժեքը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աթոռ երկաթյա | հատ | 7 | 480 | 3360 |
| 2 | Բազկաթոռ | --,,-- | 1 | 8739 | 8739 |
| 3 | Կախիչ | --,,-- | 1 | 130 | 130 |
| 4 | Ռեզին մուտքի | --,,-- | 1 | 160 | 160 |
| Ընդամենը | | | | 12389 | |

Տասներկու հազար երեք հարյուր ութսունինը դրամ

## ԹԱՆԳԱՐԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1. Աղբարկղ էմալապատ | 1հատ | 50 | 50 |
| 2. Պահ. երկաթ.դուռ | 1հատ | 510 | 510 |
| Ընդամենը | | | 560 |

Հինգ հարյուր վաթսուն դրամ

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աթոռ թատերական | հատ | 5 | 1260 | 6300 |
| 2 | Մագնիտոֆոն ,,Յուպիտեր,, | հատ | 1 | 9309 | 9309 |
| 3 | Ժամացույց պատի | հատ | 1 | 3000 | 3000 |
| 4 | Աստիճան երկաթյա | հատ | 1 | 40.8 | 40.8 |
| 5 | Վոլտմետր | հատ | 1 | 5000 | 5000 |
| 6 | Խողովակ վառարանի | հատ | 2 | 150 | 300 |
| 7 | Լինելյում | մետր | 15 | 5000 | 75000 |
| 8 | Բարձրախոս | հատ | 1 | 10000 | 10000 |

Ընդամենը 108949.8

Մեկ հարյուր ութ հազար ինը հարյուր քառասունինը դրամ

Համայնքի ղեկավար Է. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 26-Ա

## ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

**համայնքի ավագանին որոշում է**

1.Հաստատել Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2013 թվականի համար՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ համարել 2013 թվականի հունվարի 20-ից:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված
Բերդի համայնքի ավագանու
2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 26-Ա որոշման

# ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 28

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը/ՀՀդրամ/ |
|---|---|---|---|
| | Համայնքի ղեկավար | 1 | 231000 |
| | Հայեցողական պաշտոններ | | |
| | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 114000 |
| | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 85150 |
| | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 73585 |
| | Համայնքային ծառայողներ | | |
| | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 111700 |
| | Ֆինանսատնտեսագիտական բաժին | | |
| | Բաժնի պետ 2.1-2 | 1 | 102500 |
| | Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 62040 |
| | Առաջին կարգի մասնագետ 3.2-9 | 1 | 56270 |
| | Առաջին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 56270 |
| | Առաջին կարգի մասնագետ 3.2-7 | 1 | 56270 |
| | Ներքին աուդիտի բաժին | | |
| | Բաժնի պետ 2.1-3 | 1 | 102500 |
| | Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Բերդի տարածքային բաժին | | |
| | Բաժնի պետ 1.3-1 | 1 | 139500 |
| | Առաջին կարգի մասնագետ 3.2-10 | 1 | 64250 |
| | Աշխատակազմ | | |
| | Գլխավոր մասնագետ 2.3-2 | 1 | 96680 |
| | Գլխավոր մասնագետ 2.3-3 | 1 | 96680 |
| | Գլխավոր մասնագետ 2.3-4 | 1 | 96680 |
| | Առաջատար մասնագետ 3.1-7 | 1 | 62040 |
| | Առաջատար մասնագետ 3.1-6 | 1 | 62040 |
| | Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 62040 |
| | Առաջին կարգի մասնագետ 3.2-3 | 1 | 56270 |
| | Քաղաքացիական աշխատանք իրականացնողներ | | |
| | Քաղաքացիական պաշտպանության շտաբի տնօրեն | 1 | 56270 |
| | Լրագրող | 1 | 56270 |
| | Տեխսպասարկման անձնակազմ | | |
| | Վարորդ | 1 | 73585 |
| | Հավաքարար | 2 | 46300 |
| | Պահակ | 3 | 46300 |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. 0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 27-Ա

## ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել Բերդի համայնքի մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2013 թվականի համար՝

1) աշխատակիցների թվաքանակը՝ 11.

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Ամսական դրույքաչափը /դրամ/ | Գումարը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տնօրեն | 1 | 73,600,00 | 73,600.00 |
| 2 | Մարզիչ | 0,5 | 36,300,00 | 27,443.00 |
| 3 | Մարզիչ | 0.85 | 58,950.00 | 44,566.00 |
| 4 | Մարզիչ | 0.85 | 56,450.00 | 42,676.00 |
| 5 | Մարզիչ | 0.85 | 56,450.00 | 42,676.00 |
| 6 | Մարզիչ | 0.85 | 56,450.00 | 42,676.00 |
| 7 | Մարզիչ | 0.85 | 80,000.00 | 60,480.00 |
| 8 | Բուժքույր | 1 | 46,300.00 | 46,300.00 |
| 9 | Տնտեսվար | 1 | 46,300.00 | 46,300.00 |
| 10 | Տեխնիկական աշխատող | 2 | 46,300.00 | 92,600.00 |

Համայնքի ղեկավար Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք. ք Բերդ Լ. Բեկի 5, հեռ. 0267 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 28-Ա

## ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել Բերդի համայնքի քաղաքային գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2013 թվականի համար՝

1) աշխատակիցների թվաքանակը՝ 2.
2)հաստիքացուցակը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Անսական դրույքաչափը /դրամ/ | Գումարը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 3 | 5 | 4 | 6 |
| 1 | Տնօրեն | 1 | 73,600.00 | 73,600.00 |
| 2 | Գրադարանավար | 1 | 46,300.00 | 46,300.00 |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք. ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 29-Ա

## ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել Բերդի համայնքի թանգարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2013 թվականի համար՝

1) աշխատակիցների թվաքանակը՝ 7.

2)հաստիքացուցակը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Ամսական դրույքաչափը /դրամ/ | Գումարը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տնօրեն | 1 | 73600 | 73600 |
| 2 | Ցուցասրահի հսկիչ | 1 | 46300 | 46300 |
| 3 | Ֆոնդապահ | 1 | 46300 | 46300 |
| 4 | Էքսկուրսավար | 1 | 46300 | 46300 |
| 5 | Գիտ. հավաքչական աշխատանքների կազմակերպիչ | 1 | 46300 | 46300 |
| 6 | Տեխնիկական աշխատող | 1 | 46300 | 46300 |
| 7 | Պահակ | 1 | 46300 | 46300 |

Համայնքի ղեկավար Ա. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 30-Ա

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Բերդ համայնքի արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2013 թվականի համար՝

1) աշխատակիցների թվաքանակը՝ 4 .

2)հաստիքացուցակը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Ամսական դրույքաչափը /դրամ/ | Գումարը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տնօրեն | 1 | 73600 | 73600 |
| 2 | Նկարչության դասատու | 1 | 65155 | 65155 |
| 3 | Գորգագործության դասատու | 1 | 58717 | 58717 |
| 4 | Նկարչության դասատու | 1 | 45587 | 45587 |

Համայնքի ղեկավար Ա. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@majl.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 31-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված*

*Բերդ համայնքի ավագանու*
*2012 թ. դեկտեմբերի 24-ի*
*N 31-Ա որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ

------------------------------------------------------------ՄԱՐԶ

# ԲԵՐԴԻ

------------------------------------------------------------ՀԱՄԱՅՆՔԻ

# 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար ______ Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 24.12.2012թ. N 31 որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

ԲԵՐԴ 2013

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

*Բերդ քաղաքը գտնվում է << հյուսիս-արևելյան մասում, Տավուշ գետի հովտում, Տավուշ Բերդի դիմաց: Հանրապետության մայրաքաղաքից հեռու է 200 կմ, մարզկենտրոնից՝ 65 կմ: Սահմանամերձ է: Բերդ քաղաքն ունի բարեխառն կլիմա, սակավածյուն է, ոչ սառնամանիքային շրջանը հաշվվում է շուրջ 220 օր:*

*Տարածքը խիստ կտրտված է, սեյսմակայունությունը՝ 7-8 բալ: Ծովի մակերևույթից բարձր է 800 մ: Համայնքի տարածքում կան սողանքներ և հեղեղատներ:*

*Բերդն իր անունն ստացել է Տավուշ բերդի անունից և տեղադրված է եղել Տավուշ գետի ձախ ափին: 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու կողմից Բերդը հիշատակվում է Ոլորուտ անունով, 1608 թ.մի հիշատակարանում՝ Բերդ անվամբ: Հնում այս տարածքը մտել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի մեջ: Բերդի տարածքում գտնվում են մի շարք պատմական հուշարձաններ, որոնցից առավել նշանավոր են միջնադարյան Հայաստանի ամրոցներից Տավուշ ամրոցը /9-13 դար/, ,,Մայրի վանք,,-ը /13-րդ դար/, Ս Սարգիս եկեղեցին և նրա շուրջը տարածվող գերեզմանոցը, որտեղ պահպանվել են նշանավոր Քիրամ. Խաչատուր վարպետների գեղաքանդակ խաչքարերը: Բերդի տարածաշրջանը հարուստ է բազմաթիվ կիկլոպյան և միջնադարյան ամրոցներով, որոնց թիվը անցնում է 40-ից, և եկեղեցիներով ու մատուռներով, որոնց թիվը հասնում է 100-ի:*

*Արժեքավոր է հատկապես քաղաքի հարավ-արևելյան մասում գտնվող կիկլոպյան ամրոցի մոտակայքում ընկած դամբարանադաշտը /5-4 դար մ.թ.ա./, որտեղից հայտնաբերվել են կավե անոթներ, ապակե ուլունքներ, երկաթե զենքեր, քորոցներ և այլ զարդեր:*

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Քաղաքի բնակչությունը կազմում է 8517 մարդ, որից՝*

| | |
|---|---|
| *կանայք* | *-4570* |
| *տղամարդիկ* | *-3947* |
| *0-6 տարեկան* | *- 534* |
| *7-17 տարեկան* | *-1105* |
| *18-65 տարեկան* | *-5516* |
| *65-ից բարձր տարեկան* | *-1362* |
| *թոշակառուներ* | *-1666* |
| *միակողմանի ծնողազուրկ երեխաներ* | *- 95* |
| *երկկողմանի ծնողազուրկ երեխաներ* | *-0* |
| *հաշմանդամներ* | *-513* |
| *Հայրենական պատերազմի մասնակիցներ* | *-12* |
| *աշխատունակներ* | *-5210* |
| *աշխատանք ունեցողներ* | *-2913* |
| *գործազուրկներ* | *-2297 /գրանցված 330, որից՝/* |
| *ընտանիքների /ծխերի թիվը/* | *-2034* |
| *,,Փարոս,, ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ* | *-403* |
| *զոհվածների ընտանիքներ* | *-13* |
| *բնակարանի կարիքավոր ընտանիքներ* | *-62* |

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Համայնքի բնակիչները 2009 թ. նոյեմբերի 22-ին 4 տարի ժամկետով ընտրել են համայնքի ավագանի՝ ներկայացուցչական մարմին, 2012 թ. սեպտեմբերի 23 -ին համայնքի ղեկավար՝ գործադիր մարմին: Համայնքի ավագանու անդամների թիվը 11-ն է, համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի, համայնքային 4 բյուջետային, 1 առևտրային և 4 ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով: Համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 16 համայնքային ծառայողներից, 8 պայմանագրային աշխատողներից և 3 հայեցողական պաշտոն զբաղեցնողներից: Համայնքային ենթակայության կազմակերպություններն են.

| | | |
|---|---|---|
| Թիվ 2 մանկապարտեզ | -աշխատողների թիվը | -33 |
| Թիվ 3 մանկապարտեզ | -աշխատողների թիվը | -18 |
| Երաժշտական դպրոց | -աշխատողների թիվը | -19 |
| Մշակույթի տուն | -աշխատողների թիվը | -12 |
| Գրադարան | -աշխատողների թիվը | - 2 |
| Թանգարան | -աշխատողների թիվը | -7 |
| Մարզադպրոց | -աշխատողների թիվը | -10 |
| Արվեստի դպրոց | -աշխատողների թիվը | - 5 |
| Համայնքի ,,ջրամատակարարման և բարեկարգման,, ՓԲԸ | -աշխատողների թիվը | -39 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում աշխատում են 2 շինարարական (,,Տավուշշին,, ԲԲԸ, ԾՇՇ ՓԲԸ) կազմակերպություններ, 5 սպասարկող (,,Բերդի ԲՈՒԱ,, ԲԲԸ, ՓԲԸ Տավուշի ԳԳՄ տարածքային տեղամաս, ,,Հայռուսգազարդ,, ,,Հայջրմուղկոյուղի,, ՓԲԸ, Հայաստանի էլեկտրական ցանցերի ,,Բերդ էլցանց,,-ը և ,,Հայփոստ,, ՓԲԸ) ձեռնարկություններ, հացի, հրուշակեղենի և ոչ ալկոհոլային ըմպելիքների արտադրությամբ զբաղվում են 3 անհատ ձեռներեցներ և 4 առևտրային կազմակերպություններ (,,ԵԿԳ,, ՓԲԸ գինու կետ, . ,,Յուրգաս,, ,,Ազրոսիթդեք,, ,,Վիգեն-Վիոլետա,, ՍՊԸ-ները,), որոնցում աշխատում է 232 մարդ:

Փոքր և միջին բիզնեսը որոշ չափով ծավալվում է առևտրի և սպասարկման ոլորտում: Քաղաքում գործում են 116 խանութներ, որոնցից 14-ը խոշոր օբյեկտներ են, առևտրի 24 կրպակներ, 8 հանրային սննդի օբյեկտներ, 8 վարսավիրանոցներ, բենզինի 5 և գազի 1 լցակայաններ, 3 լուսանկարչատուն, 5 տարբեր ծառայություններ, 3 ինտերնետ կապ, 4 ինտերնետային ակումբ և 2 հյուրանոց: Առևտրի և սպասարկման ոլորտում աշխատում է 295 մարդ:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

*Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը ներկայացվում է հավելված 2-ի տեսքով:*

Աղյուսակ 1. Համայնքի ենթակառուցվածքների գնահատում

| Հ/հ | Կառույց | Հասցե | Կառուցման տարեթիվ | Մակերես քառ. մ | Ընդհանուր վիճակի գնահատ. | Նորոգման /վերականգնման/ փոխարինման կարիք | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Քաղաքապետարան | Լ.Բեկի-5 | 1973 | 770 | բավ. | Վերանորոգում | |
| 2 | Մշակույթի տուն | Այգեստան | 1975 | 1360 | լավ | Վերանորոգում | |
| 3 | Թանգարան | | 1970 | 290 | լավ | Վերանորոգում | |
| 4 | Մարզադպրոց | | 1975 | 800 | լավ | Վերանորոգում | |
| 5 | Թ.2 մանկապ. | Լ.Բեկի | 1978 | 998 | բավ. | Վերանորոգում | Ընթացքի մեջ է |
| 6 | Թ.3 մանկապ. | Ստեփանյան | 1979 | 1430 | բավ. | Վերանորոգում | |
| 7 | Թ.4 դպրոց/մանկ./ | | | 1110 | լավ | Վերանորոգում | |
| 8 | Մարզադաշտ | | | 1248 | վատ | Վերանորոգում | |
| 9 | Քաղաքային զբոսայգի | | | 0.7 հա | բավ. | Վերանորոգում | |
| 10 | Մանկ. շենք /N1 դպրոց/ | | | 998 | լավ | Վերանորոգում | Վերանորոգված է |
| 11 | Ուսումնարանի տարածք | | | 440 | լավ. | Վերանորոգում | Վերանորոգված է 1/2-ը |
| 12 | Վարժարանի տարածք | | | 280 | բավ. | Վերանորոգում | Վերանորոգված է |
| 13 | Գերեզմանատուն | | | 7.5հա | բավ. | Վերանորոգում | |

## ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

*Համայնքի բազմաբնակարան շենքերի սպասարկումը հանձնված է քաղաքապետարանի բարեկարգման ՓԲԸ-ին: 2009-2012 թ.թ. հիմնովին նորոգվել են 14 բազմաբնակարան շենքերի տանիքներ:*

*Համայնքում կա 28 բազմաբնակարան բնակելի շենք՝ 852 բնակարաններով: Համայնքի բնակֆոնդը կազմում է 40262 քմ մակերես, որն ամբողջովին սեփականաշնորհված է: Համայնքում առկա են 5 բազմաբնակարան վթարային շենքեր՝ 162 բնակարաններով: Բազմաբնակարան շենքերի ոչ բնակելի տարածքներից 1981 քմ մակերես վարձակալությամբ տրամադրվել է բնակիչներին՝ որպես նկուղներ օգտագործելու համար: Կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքեր չկան: Համայնքում համատիրություններ դեռևս չեն ստեղծվել: Համայնքի միայն 1 բազմաբնակարան շենքում են տեղադրված վերելակներ՝ 3, որոնք անսարք են:*

*Համայնքում առանձնատների թիվը հասնում է 2110-ի, որից 87-ը վթարային են, 43-ը՝ կիսակառույց: Համայնքում հաշվվում են 280 ավտոտնակներ, 5720 քմ մակերեսով, որից 265-ը ինքնակամ կառույցներ են՝ 5270 քմ մակերեսով: 15 ավտոտնակներ օրենքով սահմանված կարգով ճանաչվել են օրինական և օտարվել կառուցապատողներին:*

## ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի հողային տարածքը կազմում է 2702.47 հա, որից՝

| | |
|---|---|
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | -1606.9 հա |
| Արտադրական նշանակության հողեր | -14.78 հա |
| Բնակարանային ֆոնդի հողեր | -334.46 հա |
| հանգստի գոտիներ | -92.92 հա |
| ջրային ֆոնդի հողեր | -7.8 հա |
| բնակավայրի տարածքը | -87 հա |
| հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը | -1487 |
| մեկ հողաբաժնի չափը | -0.7/0.13 |
| պետական պահուստային հողեր | -729.9 հա |
| համայնքի սեփականություն համարվող հողեր | -1098.9 հա |
| օտարված և օգտագործման տրամադրված հողեր | -455.4 հա |

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառում զբաղված է աշխատունակ բնակչության 44.5 %-ը:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է: Բարեխառն կլիման, լեռնատափաստանային և լեռնամարգագետնային գոտիները բարենպաստ պայմաններ են ստեղծում խոշոր և մանր եղջերավոր անասնապահության, ինչպես նաև խոզաբուծության զարգացման համար:

Խոշոր և մանր եղջերավոր անասունների քանակը 1518 է: Համայնքում արտադրվում է կաթ, միս, բուրդ, ձու:

Վերջին տարիներին աճել է բնակչության հետաքրքրությունը մեղվաբուծության և թռչնաբուծության նկատմամբ: Ներկայումս համայնքում հաշվվում է 543 մեղվաընտանիք և 8006 ընտանի թռչուն:

Համայնքի ներքին գոտու հողատարածքները շատ հարմար են հացահատիկային և շարահերկ կուլտուրաների մշակության, խաղողագործության և պտղաբուծության համար: 2012թ. համայնքում արտադրվել է 2310 ց խաղող, 6000 ց կարտոֆիլ, 3987 ց հացահատիկ և հատիկաընդեղեն:

Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները 44 հա են: Արոտավայրերը ջրարբիացված չեն:

## ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքում չկան աղակալած, հողմնահարված, հողատարած, ճահճացած, ողողված հողեր:

Համայնքն ունի 541 հա արոտավայր: Համայնքի տարածքում և համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող արոտավայրերի /ենթալպյան գոտի/ արդյունավետ օգտագործումը նպաստում է էկոլոգիապես մաքուր անասնապահական մթերքների արտադրության աճին: Հեռագնա արոտավայրերում կան անասունների ջրման 15 կետեր, որոնք գտնվում են սանիտարական բավարար վիճակում:

Քաղաքի աղբահանությունը կատարվում է քաղաքապետարանի
բարեկարգման ՓԲԸ-ի միջոցով: Աղբահանությունն իրականացվում է ԳԱԶ-53
ինքնաթափի, Տ-40 կցասայլով տրակտորի և ԶԻԼ-433362 միջոցով: Համայնքում
տարեկան գոյանում է 2640 տ կամ մոտ 5280 – 6500 խոր.մ կոշտ կենցաղային
թափոն: Օրական գոյացող ԿԿԹ ծավալը կազմում է 18-20 խոր.մետր: Քաղաքի
տարածքում տեղադրված են 86 մեծ և 170 փոքր աղբարկղեր: Կազմված
գրաֆիկի համաձայն համայնքում կատարվում է ամենօրյա աղբահանություն:
Բարեկարգման ՓԲԸ միջոցով 2012 թվականից համայնքում իրականացվում է
պոլիէթիլենային տերեֆտալատե /ՊԵՏ/ թափոնների հավաքման ծրագիրը:

Քաղաքի կանաչապատ տարածքը կազմում է 30.75 հա: Կանաչապատ
տարածքների վիճակը բարելավելու նպատակով 2009-2012թ. թ. իրականացվել են
2 ծրագրեր ,,Վարձատրվող հասարակական աշխատանքների,, շրջանակներում:
Զգացվում է կանաչապատ տարածքները խնամելու և պահպանելու
անհրաժեշտություն:

Քաղաքում աշխատում է ,,Հայանտառ,, ՊՈԱԿ –ի Արծվաբերդի
մասնաճյուղը, որը բնապահպանական կազմակերպություն է, ունի 80 աշխատող:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քաղաքի փողոցների երկարությունը 64 կմ է, 507760 քմ մակերեսով, որից
87000 քմ ասֆալտապատ է, 13600 քմ սալահատակ է, 325760 քմ խճապատված
է, 81400 քմ ունի հողային ծածկույթ:

Ներհամայնքային ճանապարհների երկարությունը 101 կմ է, 452400 քմ
մակերեսով: Համայնքային ենթակայության կամուրջները 6-ն են, որից 1-ը
կիսակառույց է, 1-ը՝ վթարային:

Համայնքի տարածքում տեղակայված են ճանապարհային երթևեկության
նշաններ, խաչմերուկներում՝ լուսացույցեր:

Համայնքի տարածքում գործում են 5 տաքսի ծառայություններ:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում են 3 հիմնական դպրոցներ, 1 ավագ դպրոց և 1
վարժարան 1029 աշակերտներով, 190 աշխատողներով և 135 ուսուցիչներով:
Դպրոցների շենքերը ջեռուցվում են: Վերջին տարիներին հարստացվել է
դպրոցների գույքային բազան: 2012 թ. շահագործման է հանձնվել ավագ դպրոցի
մարզադահլիճը, մնացած դպրոցները չունեն մարզադահլիճներ և բաց
սպորտային հրապարակներ: Համայնքի տարածքում է նաև 183 սովորող ունեցող
արհեստագործական ուսումնարանը և 85 ուսանող ունեցող պետական քոլեջը:

Նախադպրոցական դաստիարակությունն իրականացվում է 2
մանկապարտեզների միջոցով, որոնք տեղավորված են տիպային շենքերում:
Մանկապարտեզներում գործում են 12 խմբեր՝ 313 երեխաներով, աշխատողների
թիվը՝ 51: 2012 թ. հիմնովին նորոգվել են մանկապարտեզների տանիքները և թիվ
2 մանկապարտեզի պատուհանները: Սոցներդրումների հիմնադրամի միջոցներով
ընթացքի մեջ են թիվ 2 մանկապարտեզի 2 մասնաշենքերի հիմնովին
վերանորոգման աշխատանքները:

## ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի երաժշտական դպրոցը տեղավորված է նորակառույց տիպային շենքում: Դպրոցի դաշնամուրի, քանոնի, շվիի, ջութակի և ծայնի մշակման բաժիններում ընդգրկված են 90 շնորհալի երեխաներ: Դպրոցն ունի 19 աշխատող, որից 13-ը դասատուներ են:

Մշակույթի տունը ունի 12 աշխատողներ: Այնտեղ գործում են պարի, երգի, մանկական թատերական, դհոլի, կարունձի խմբակներ՝ 78 մասնակիցներով: Մշակույթի տան նյութատեխնիկական բազան աղքատիկ է:

Քաղաքային գրադարանում կա 79400 կտոր գիրք: Գրադարանի գրքային ֆոնդը վերջին տարիներին հարստացել է մշակույթի նախարարությունից, քաղաքապետարանից ստացված գրքերով և մարզային գրադարանից, ,,Կանաչ արահետ,, ՀԿ-ն և գրադարանը անհատական նվիրատվություններով: ,,Տեղեկատվական և հեռահաղորդակցային համատեղ իրականացնում են ,,Տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաներն ի նպաստ գյուղատնտեսական գործունեության կատարելագործման,, ծրագիրը: Ծրագրի շրջանակներում գրադարանը համալրվել է 7 համակարգիչներով, հնարավորություն ընձեռելով գրադարանին՝ բարձրացնելու մատուցվող ծառայությունների որակը և բավարարելու ֆերմերների և գյուղացիների տեղեկատվական կարիքները: Գրադարանը տեղավորված է հարմարեցված շենքում:

Թանգարանը գտնվում է գեղատեսիլ Սորանի զբոսայգու հարևանությամբ, տիպային շենքում, ունի 700 ցուցանմուշներ: Թանգարանում ներկայացված է Տավուշի տարածաշրջանի բնակչության պատմությունը և կենցաղը՝ սկսած բրոնզեդարյան ժամանակաշրջանից: Թանգարանում աշխատում է 7 մարդ:

Քաղաքի մարզադպրոց են հաճախում 210 պատանիներ և աղջիկներ, որոնք մարզվում են բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, ըմբշամարտի, ֆուտբոլի, ,,Ու-Շու,,-ի խմբակներում: Մարզադպրոցը սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն է: Դպրոցում աշխատում են 6 մարզիչներ: Դպրոցի նյութատեխնիկական բազան բավարար է:

Համայնքի արվեստի դպրոցի գունանկարի, գծանկարի, կոմպոզիցիայի, քանդակագործության և ասեղնագործության բաժիններում սովորում են 52 երեխաներ, որոնց հետ աշխատում են 4 դասատուներ:

Համայնքում առկա են տեղական ինքնակառավարմանը հասարակության մասնակցությունն ապահովող քաղաքական և հասարակական որոշակի կառույցներ. կուսակցությունների տարածքային կազմակերպություններ իրենց երիտասարդական խմբերով /ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, Ժառանգություն/, հասարակական կազմակերպություններ /,,Հույսի կամուրջ,, , ,,Տավուշի կանայք,, , ,,Կաղնի,, , ԲՀՄ և այլն/:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է 60 մահճակալով 1 հիվանդանոց: Հիվանդանոցում աշխատում են 27 բժիշկներ և 126 բուժաշխատողներ: Համաշխարհային բանկի միջոցներով հիմնովին վերանորոգվում է հիվանդանոցի շենքը: Այն կհամալրվի արդիական բուժսպասարկման սարքավորումներով:

Համայնքի տարածքում գտնվող հոսպիտալը սպասարկում է ծառայողներին և նրանց հարազատներին:

## ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

*Քաղաքն ունի 2 զբոսայգի, 3 բացօթյա խաղահրապարակ, 2 մարզադաշտ և քաղաքամերձ անտառային գոտի: Զբոսայգիներն ու մարզադաշտերը հիմնովին վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն: Զգացվում է բակային տարածքներն ասֆալտապատելու, քաղաքամերձ անտառային գոտին պահպանելու անհրաժեշտություն:*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

--Համայնքը գտնվում է անտառամերձ գոտում, հարուստ է բնության գեղատեսիլ վայրերով, պատմամշակութային հուշարձաններով, գործում է Տավուշի պատմության և կենցաղի թանգարանը, հնարավորություններ ունի տուրիզմի զարգացման համար:

--Համայնքը գազաֆիկացված է:

--Հեռախոսակապի և հեռուստակայանի առկայությունը:

-- Առևտրի հիմնական օբյեկտների առկայությունը:

--Համայնքն ունի մեծ պոտենցիալ /ինժեներական և գյուղատնտեսական կադրեր/, որը կարող է հիմք հանդիսանալ արտադրական ճյուղերի գործարկման համար:

--Անասնապահության զարգացման համար հարուստ բնական կերային բազայի առկայությունը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

--Համայնքը գտնվում է << հյուսիս-արևելյան հատվածում, հեռու է մայրաքաղաքից, մարզկենտրոնից, սահմանամերձ է:

--Ներհամայնքային փողոցների ոչ բարվոք վիճակը:

--Գործազրկության բարձր մակարդակը:

--Սոցիալապես անապահով է բնակչության մեծ մասը:

--Ծայրահեղ աղքատ ընտանիքների անընդհատ աճը:

--Բնակարանի կարիքավորների առկայությունը:

--Գյուղատնտեսության զարգացման նյութատեխնիկական բազայի անբավարար վիճակը:

--Խմելու ջրի, կոյուղու և ոռոգման համակարգերի վերանորոգման անհրաժեշտությունը:

--Համայնքում գյուղատնտեսական մթերք, հումք ընդունող կետերի բացակայությունը/բացառություն է կազմում խաղողը/:

--Մեծ չափերի է հասնում բնակչության արտահոսքը:

--Համայնքում կան երկրաշարժից, սողանքներից, հրետակոծությունից տուժած բնակշենքեր և առանձնատներ:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*--Աշխատուժի առկայությունը:*
*--Գրանտների, ներդրումների, փոխառու միջոցների ներգրավման հնարավորությունները:*
*--Մշակելի հողատարածքների և անտառների առկայությունը:*

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*-- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի և կոյուղու զգալի մասի վթարային վիճակը:*
*--Խմելու ջրի մաքրման կայանի վթարային վիճակը:*
*--Վթարային շենքերի և առանձնատների առկայությունը:*
*--Սողանքների առկայությունը:*

# 2.ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

*Բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում, բնակարանի կարիքավոր ընտանիքների համար բնակարանային ծրագրերի իրագործում:*

# 3.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

### Ռազմավարություն

*Համայնքի քառամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն է՝ համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն, մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր, բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանները, օժանդակել գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացմանը, աջակցել նոր աշխատատեղերի բացմանը:*

***Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝***

*--Նոր աշխատատեղերի բացում:*
*--Բնակչությանը խմելու ջրի մատակարարման բարելավում:*
*--Համայնքի շուրջօրյա խմելու ջրով ապահովում:*
*-- Ջրմուղ կոյուղու ներքին ցանցի հիմնական վերանորոգում:*
*--Ներքաղաքային ճանապարհների, փողոցների վերանորոգում և լուսավորում:*
*--Համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:*
*--Զբոսայգիների, խաղահրապարակների, կանաչապատ գոտիների բարեկարգում, ավելացում և խնամք:*
*--Գերեզմանատան բարեկարգում:*
*--Եկեղեցու շենքի կառուցման ավարտում:*
*--Մարզադպրոցի, մշակույթի տան և մանկապարտեզների լոկալ ջեռուցում:*
*--Թանգարանի շենքի վերանորոգում:*

--Լևոն Բեկի 10 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնովին վերանորոգում:
--Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում:
--Աջակցություն փոքր և միջին բիզնեսին:
--Բնակարանի կարիքավոր ընտանիքների համար ծրագրերի իրականացում:
--Բաց սպորտային հրապարակների ստեղծում:
--Մարզադաhլիճների կառուցում:
--Բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի վերանորոգում:
--Մաշտոցի 23 շենքի վերելակների վերանորոգում:
--Համատիրությունների ստեղծում:
--Աղբարկղերի տեղադրում քաղաքի նոր թաղամասերում:

## 4.ՀԱՄԱՅՆՔԻ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

### 1.Ջրամատակարարում և ջրահեռացում

### Ծրագիր 1

Համայնքի խմելու ջրի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցի հիմնովին նորոգում, մաքրման նոր կայանի կառուցում /Նալբանդյան փողոց/

Նպատակը- վերացնել համայնքի խմելու ջրի ջրամատակարարման ցանցի վթարները, բարելավել ջրամատակարարման սանիտարա-հիգիենիկ պայմանները, ջրամատակարարումը դարձնել շուրջօրյա:

Խնդիր 1- խմելու ջրի ներքին ցանցի հիմնական նորոգում

Խնդիր 2- խմելու ջրի մաքրման կայանի նորոգում

Խնդիր 3 - խմելու ջրի մաքրման նոր կայանի կառուցում

Խնդիր 4 - 2 նոր ՕՎՋ-ի կառուցում

Խնդիր 5 - կոյուղու ներքին ցանցի հիմնովին նորոգում և նոր թաղամասերում ցանցի կառուցում:

Խնդիր 6-կեղտաջրերի մաքրման կայանի նորոգում:

Նախատեսվում է իրականացնել պետբյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցներով:

Ժամկետը 2013-2014թթ

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

## ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

### Ծրագիր 2

Ներքաղաքային փողոցների վերանորոգում և լուսավորում

Նպատակը- Բարեկարգել քաղաքի փողոցները և ճանապարհները, մաքրել և կառուցապատել սելավատարները, քաղաքը դարձնել բարեկարգ:

Խնդիր 1- Քաղաքի չորս խաչմերուկներում տեղադրել 4 թարթիչ լուսացույցեր:

Նախատեսվում է իրականացնել պետբյուջեի միջոցներով:

Ժամկետը 2014թ

Պատասխանատու- քաղաքապետ

Խնդիր 2- Քաղաքի 2 նոր թաղամասերում լուսավորության անցկացում և Մաշտոցի, Այգեստան, Նժդեհի, Տավուշեցու փողոցներում լուսավորության անցկացման աշխատանքների շարունակում:

Նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով

Ժամկետը 2013-2014թթ.

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

Խնդիր 3 - Մաշտոցի փողոցում ասֆալտապատման աշխատանքների շարունակում:

Նախատեսվում է իրականացնել պետբյուջեի միջոցներով:

Ժամկետը 2013-2016թթ

Պատասխանատու - քաղաքապետ

Խնդիր 4-Աղամյան, Այգեստան, Մանուկյան /սալահատակ/ փողոցների վերանորոգում:

Նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով

Ժամկետը 2013-2016թթ

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

Խնդիր 5-Քաղաքի երկրորդական փողոցների խճապատում:

Նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով

Ժամկետը 2013-2014թթ

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

## Ծրագիր 3

## Համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

Նպատակը-Համայնքի դաշտամիջյան ճանապարհները դարձնել երթևեկելի տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական մեքենաների և մեխանիզմների համար:

Խնդիր 1- Հարթեցնել 17 կմ երկարությամբ դաշտամիջյան ճանապարհները: ,,Գյոլ թալա-Սորան,, -2.5 կմ, ,,Ցից քար- Շեկ դյեր,, - 3 կմ, ,,Զաքար հայանց տափ-Տանձուտ,, - 1.5 կմ, ,,Էրածներ-Վանք,, -2 կմ, ,,Խնձորկուտ-Մազմաններ,, - 3 կմ, ,,Ուսեփանց պատի տակ-Մազմաններ,,- 2 կմ, ,,Ճաղարի պակեր- Երղանի գլուխ,, -3 կմ

Նախատեսել յուրաքանչյուր տարվա համար 1,5մլն դրամ

Ժամկետը ամեն տարի

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

## Ծրագիր 4

## Զբոսայգիների, խաղահրապարակների, կանաչապատ գոտիների բարեկարգում

Նպատակը- պայմաններ ստեղծել բնակչության, երեխաների հանգստի կազմակերպման համար, ձևավորել հաճելի ու բարեկարգ միջավայր:

Խնդիր 1 - Կանաչապատ գոտիների բարեկարգում, ծառերի էտում, ծաղկապատում, կանաչապատում և խնամք:

նախատեսվում է կատարել համայնքի բյուջեի միջոցներով

Ժամկետը 2013-2016թթ

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

Խնդիր 2-Մաշտոցի 26 շենքի հարևանությամբ գտնվող մանկական զբոսայգու ընդլայնում, վերակառուցում, համաքաղաքային մանկական զվարճանքի կենտրոնի ստեղծում:

նախատեսվում է կատարել համայնքի բյուջեի և դոնոր կազմակերպություններ միջոցներով

Ժամկետը 2013թ.

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

Խնդիր 3-Ջրուսյագիծերում նստարանների տեղադրում, լուսավորության անցկացում:

Նախատեսվում է կատարել համայնքի բյուջեի միջոցներով

ժամկետը 2013-2016թթ.

Պատասխանատու- գլխավոր մասնագետներ, մշակույթի տուն

Խնդիր 4 – Նոր կարուսելների տեղադրում:

Աշխատանքների ֆինանսավորումը կատարել դոնոր կազմակերպություններ միջոցներով

ժամկետը 2013-2014թթ

Պատասխանատու- քաղաքապետ

Խնդիր 5 - Մանկապարտեզների խաղահրապարակների վերանորոգում և ընդարձակում:

Աշխատանքները նախատեսվում է կատարել դոնոր կազմակերպությունների և ՀԿ միջոցներով

ժամկետը 2013թ.

Պատասխանատու քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

## Ծրագիր 5

## Գերեզմանատան բարեկարգում

Նպատակը-Գերեզմանատան տարածքի ընդլայնում և բարեկարգում:

Խնդիր 1-Գերեզմանատան ցանկապատման աշխատանքների շարունակում և մաքրում:

Աշխատանքները կատարել համայնքի բյուջեի միջոցներով

ժամկետը 2013-2014թթ

Պատասխանատու քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

Խնդիր 2- Ճանապարհների խճապատում:

Աշխատանքները կատարել համայնքի բյուջեի միջոցներով

ժամկետը 2013-2016թթ

Պատասխանատու- քաղաքապետ

Խնդիր 3- Թաղման արարողությունների իրականացման նպատակով շենքի կառուցում և կահավորում:

Աշխատանքները կատարել համայնքի բյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցներով

ժամկետը 2015թ.

Պատասխանատու- քաղաքապետ

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Ծրագիր 6

Մարզադպրոցի, մշակույթի տան, թանգարանի, մանկապարտեզների լոկալ ջեռուցում, թանգարանի շենքի վերանորոգում

Նպատակը-Բարելավել մշակույթի և սպորտի օջախների նյութատեխնիկական բազան, նպաստել մշակույթի և սպորտի զարգացմանը:

Խնդիր -1- Մարզադպրոցի, մշակույթի տան, թանգարանի, մանկապարտեզների լոկալ ջեռուցում:

Նախատեսվում է կատարել պետբյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցներով

Ժամկետը 2015թ.

Պատասխանատու քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

Խնդիր - 2- Թանգարանի շենքի նորոգում:

Նպատակը -Թանգարանի նյութատեխնիկական բազայի հարստացում, ցուցանմուշների պահպանման պայմանների բարելավում:

Նախատեսվում է աշխատանքներն իրականացնել պետբյուջեի միջոցներով

Ժամկետը 2013-2014թթ

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

Խնդիր -3- Մարզադպրոցի շենքի նորոգում:

Նախատեսվում է աշխատանքներն իրականացնել պետբյուջեի միջոցներով

Ժամկետը 2014թ.

Պատասխանատու- քաղաքապետ

Ծրագիր 7

Մարզադահլիճների կառուցում, բաց սպորտային հրապարակների ստեղծում

Նպատակը- Ստեղծել բավարար պայմաններ երեխաների, երիտասարդության, ֆիզիկական դաստիարակության համար:

Խնդիր 1- Մարզադահլիճների կառուցում 1-ին, 3-րդ և 4-րդ դպրոցների համար:

Աշխատանքներն իրականացնել պետբյուջեի միջոցներով

Ժամկետը 2014թ.

Պատասխանատու քաղաքապետ

Խնդիր 2- Մինի ֆուտբոլի դաշտի ստեղծում:

Աշխատանքներն իրականացնել դոնոր կազմակերպությունների միջոցներով

Ժամկետը 2013թ.

Պատասխանատու- քաղաքապետ

Խնդիր 3- Ֆուտբոլի մարզադաշտի համալիրի կառուցում:

Աշխատանքներն իրականացնել պետբյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցներով

Ժամկետը 2014-2016թթ.

Պատասխանատու քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

Խնդիր 4- Գոլֆի խաղադաշտի կառուցում:

Աշխատանքներն իրականացնել և դոնոր կազմակերպությունների և ՀԿ միջոցներով

Ժամկետը 2013թ.

Պատասխանատու քաղաքապետ, գլխավոր մասնագետներ և ՀԿ-ներ

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### Ծրագիր 8

Եկեղեցու շենքի շինարարության ավարտում

Նպատակը- Համայնքի բնակչության համախմբում հայ առաքելական եկեղեցու շուրջը և պայքար աղանդների դեմ:

Կառուցումն իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջոցներով

Ժամկետը 2013թ

Պատասխանատու- քաղաքապետ

### Ծրագիր 9

Լեռն Բեկի 10 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնովին վերանորոգում

Աշխատանքներն իրականացնել պետբյուջեի միջոցներով

Ժամկետը 2014թ.

Պատասխանատու- քաղաքապետ

### Ծրագիր 10

Լեռն Բեկի 5 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնովին վերանորոգում

Աշխատանքներն իրականացնել պետբյուջեի միջոցներով

Ժամկետը 2014թ.

Պատասխանատու քաղաքապետ

### Ծրագիր 11

Բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի վերանորոգում

Խնդիր 1- բազմաբնակարան 13 շենքերի տանիքների վերանորոգում:

Աշխատանքներն իրականացնել պետբյուջեի միջոցներով

Ժամկետը 2013-2016թթ

Պատասխանատու- քաղաքապետ

Խնդիր 2 - 28 շենքերի մուտքերի վերանորոգում:

Աշխատանքներն իրականացնել պետբյուջեի միջոցներով

Ժամկետը 2013-2016թթ

Պատասխանատու- - քաղաքապետ

Խնդիր 3- Մաշտոցի 23 շենքի 3 վերելակների վերանորոգում:

Աշխատանքներն իրականացնել պետբյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցով:

Ժամկետը 2013թ.

Պատասխանատու - քաղաքապետ

Ծրագիր 12

Աղբարկղերի տեղադրում քաղաքի նոր թաղամասերում

Աշխատանքներն իրականացնել ՀԿ-ների միջոցներով

Ժամկետը 2013-2016թթ

Պատասխանատու- քաղաքապետ

Ծրագիր 13

Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելիության խնդիրների լուծում

Խնդիր 1- Համայնքի տարածքում գտնվող կառույցներում աստիճանների հարևանությամբ թեքուղիների կառուցում

Աշխատանքներն իրականացնել պետբյուջեի և ՀԿ-ների միջոցներով

Ժամկետը 2013-2016թթ

Պատասխանատու- քաղաքապետ, գլխավոր մասնագետներ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. (0267) 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 32-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և 54-րդ հոդվածի 2-րդ մասով **համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել համայնքի 2013 թվականի բյուջեն.

1) եկամուտների գծով` 161830,40 հազար դրամ

2) ծախսերի գծով` 161830,40 հազար դրամ

2.Հաստատել համայնքի տեղական բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամուտների համաձայն N 1 հավելվածի:

3.Հաստատել համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման համաձայն N 2 հավելվածի:

4.Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում` պահպանելով ծախսերի համամասնությունները:

5.,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն`

1) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 տոկոսը:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդ համայնքի ավագանու
2012 թ. դեկտեմբերի 24-ի
N 32-Ն որոշման

## 2013 թվականի համայնքի տեղական եկամուտների ըստ առանձին հոդվածների

| Հ/h | ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ | /Հազար դրամ/ |
|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 6000,0 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 13000.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3000.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4500.00 |
| 5 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 1000.00 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 4000.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 10500.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 4000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 46000,0 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 111042.60 |
| 10 | Ազգային նվազագույններ | 2132.80 |
| 11 | ՊԵՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2655.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 115830,40 |
| 12 | ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | |
| 13 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | |
| 14 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | |
| | ԱՄԲՈՂՋԸ | 161830,40 |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 2

Բերդ համայնքի ավագանու
2012 թ. դեկտեմբերի 24-ի
N 32-Ն որոշման

# Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2013թ.

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Հազար դրամ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 35000,0 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 19030,0 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 19876.0 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ | 14032,6 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | 56500,0 |
| 6 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 500,0 |
| 7 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 4000,0 |
| 8 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ մաս | 3736.8 |
| 9 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2655,0 |
| 10 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3000,0 |
| 11 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 2500.0 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 161830,40 |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Ն. Թևիկի 5, հեռ. 0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 33-Ն

## ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

Համայնքի 2012թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համաձայն ՀՀ կառավարության 06.12.2012թ. N 1572 –Ն որոշման, և հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետի և Բերդի քաղաքապետի միջև 21.12.2012թ. կնքված թիվ 36 ընթացիկ սուբվենցիայի մասին պայմանագիրը՝ 2012թ. բյուջեի եկամտային մասի ,,Ընթացիկ սուբվենցիա,, /4632/ հոդվածն ավելացնել 600000 դրամ գումարի չափով, բյուջեի ծախսային մասի՝ ,,Սոցիալական արտոնություններ,, /10.07.01.51/, /4729/ հոդվածը՝ 600000 դրամ գումարի չափով /համաձայն 1 և 2 հավելվածների/:

2) ,,Այունէներգաշին,, ՓԲԸ –ի կողմից քաղաքապետարանի վարչական շենքի սանհանգույցի կապիտալ վերանորոգման համար, նվիրատվության կարգով, համայնքին տրամադրված 1665600 /մեկ միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր/ դրամ գումարի չափով ավելացնել 2012թ. բյուջեի եկամտային մասի ,,Այլ եկամուտներ,, հոդվածը և բյուջեի ծախսային մասի՝ ,,Տեղական ինքնակառավարման,, հոդվածը /համաձայն 1 և 2 հավելվածների/:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդի համայնքի ավագանու
2012 թ. դեկտեմբերի 24-ի
N 33-Ն որոշման

## 2012 թվականի համայնքի տեղական եկամուտներն ըստ առանձին հոդվածների

| Հ/հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ | /Հազար դրամ/ |
|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5700.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 13100.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4500.00 |
| 5 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 15537.40 |
| 6 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ | 3000.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 550.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 11000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 56887.00 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 102222.80 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2525.23 |
| 11 | Ազգային ծրագրեր | 2252.20 |
| 12 | Ընթացիկ սուբվենցիա հողի հարկի դիմաց | 600.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 107600.23 |
| 12 | ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 5231.80 |
| 13 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 0.60 |
| 14 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 5231.20 |
| | ԱՄԲՈՂՋԸ | 169719.03 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Մանուչարյան

Հավելված 2

Բերդի համայնքի ավագանու
2012 թ. դեկտեմբերի 24-ի
N 33-Ն որոշման

## Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման
## 2012թ.

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Հազար դրամ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ | 46359.6 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 30259.2 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 23279.6 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ | 13718.2 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | 27000 |
| 6 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 4600 |
| 7 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 9231.8 |
| 8 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | 2545.4 |
| 9 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2525.23 |
| 10 | ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 0 |
| 11 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5000 |
| 12 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 5200 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 169719.03 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. 0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 34-Ա

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՒ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ,,ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ,, ՓԲԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով

**համայնքի ավագանին որոշում է**

Բերդ քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող մատակարարվող խմելու ջրի ու կոյուղու 93356 դրամ հաշվեկշռային արժողության համակարգերը մինչև 2035թ. հուլիսի 1-ը, ՀՀ Կառավարության կողմից հաստատված ,,Անշարժ գույքի անհատույց օգտագործման,, պայմանագրով, հանձնել ,,Հայջրմուղկոյուղի,, փակ բաժնետիրական ընկերությանը:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. 0267 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 35-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.5 ՀԵԿՏԱՐ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

Համայնքի սեփականությունը համարվող գյուղատնտեսական նշանակության 1,5 հա 2-րդ կարգի ջրովի վարելահողը, ծածկագիրը, 11-002- 0315-0035, տրամադրել մրցույթով, վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով:

Վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տարեկան 25000 դրամ:

Համայնքի ղեկավար [signature] Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք.Բերդ Լ. Բեկի 5, հեռ. 0267 2-10-81
berdham-eyiq-@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 36-Ա

## 0,05 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

Համայնքի սեփականությունը համարվող գյուղատնտեսական նշանակության 0,05 հա այլ հողատեսքը օտարել աճուրդով:

Հողամասի մեկնարկային գինը սահմանել 6625 դրամի չափով:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Ն. Բեկի 5, հեռ. 0267 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 37-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 2012թ. դեկտեմբեր ամսվա աշխատավարձերը վճարելու նպատակով

**համայնքի ավագանին որոշում է**

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից տրամադրել 624485դրամ՝ համայնքի մարզադպրոցի, քաղաքային գրադարանի և ,,Բերդի մշակույթի տուն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2012թ. դեկտեմբեր ամսվա աշխատավարձերը վճարելու համար: Այդ նպատակով համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ /11.01.01.51/

1)127105 դրամ ուղղել մարզադպրոցի պահպանման ծախսերի նախահաշվի /08.01.01.51/ ,,Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ,, /4111/ հոդվածին.

2)135725 դրամ ուղղել քաղաքային գրադարանի պահպանման ծախսերի նախահաշվի /08.02.01.51/ ,,Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ,, /4111/ հոդվածին.

3) 361655 դրամ ուղղել ,,Բերդի մշակույթի տուն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն պահպանման ծախսերի նախահաշվի /08.02.03.51/ ,,Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ,, /4111/ հոդվածին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Ն. Բեկի 5, հեռ. 0267 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 38-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով

**համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման /ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների/ հաշվետվությունը համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Բերդի համայնքի սեփականաշնորհված և վարձակալական հիմունքներով հատկացված հողերի օգտագործման սխեման համաձայն N 2 հավելվածի:
3. Հաստատել համայնքի վարձակալությամբ հատկացվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վարձավճարների չափը 1 հեկտարի հաշվով՝ համաձայն N 3 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1
Ձև N 22

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների , առ 01.07.2012 թ.)

Մարզ: Տավուշ (անվանումը) — 11 (կոդ)

Համայնք: Բերդ (անվանումը) — 871 (կոդ)

*(հեկտարներով)*

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Տողի NN | Ընդամենը (2+3+4+8+12) | Սեփականության սուբյեկտներ: ՀՀ քաղաքացիների | իրավաբանական անձանց | համայնքային: ընդամենը (5+6+7) | օտարման ենթակա չէ | օտարման ենթակա է | օգտագործման տրամադրված կամ վարձակալությամբ | պետական: ընդամենը (9+10+11) | օտարման ենթակա չէ | օտարման ենթակա է | օգտագործման տրամադրված կամ վարձակալությամբ | ՀՀ 22-րդ հոդվածով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական նշանակության հողեր | վարելահող | | 806.98 | 581.81 | | 225.167 | | 2.00 | 223.167 | | | | | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ, ընդամենը | | 21.75 | 0.31 | | 21.44 | | 21.44 | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ պտղատու այգի | | | | | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 21.75 | 0.31 | | 21.44 | | 2.00 | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 126.83 | | | 54.83 | | | 54.830 | | | | | |
| 1.4 | | արոտ | | 541.74 | 72.00 | | 541.74 | | | 541.740 | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 109.60 | 0.53 | | 109.07 | | | 109.07 | | | | | |
| 1 | | Ընդամենը | | 1606.90 | 654.65 | | 952.247 | | 23.44 | 928.81 | | | | | |
| 2.1 | 2. Բնակավայրերի հողեր | բնակելի կառուցապատման | | 196.80 | 194.19 | | 2.61 | | | 2.61 | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում՝ տնամերձ հողեր | | 193.93 | 193.80 | | 0.43 | | | 0.13 | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառ-ն) | | 0.25 | 0.25 | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական կառուցապ. | | 25.54 | 6.80 | 11.52 | 0.32 | | 0.30 | 0.02 | 6.91 | 3.21 | | 3.26 | |
| 2.3 | | խառը կառուցապատման | | 6.53 | 0.08 | 5.42 | 1.03 | | | 1.03 | | | | | |
| 2.4 | | ընդհանուր օգտագործման | | 49.58 | | | 49.58 | | | 49.58 | | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 56.01 | | | 56.01 | | | 56.01 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 334.46 | 200.93 | 16.94 | 109.68 | | 0.30 | 109.38 | 6.91 | 3.71 | | 3.26 | |
| 3.1 | 3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | արդյունաբերության | | 11.46 | 0.10 | | 11.36 | | | 11.36 | | | | | |
| 3.2 | | գյուղատնտեսական արտադր. | | 2.68 | 0.85 | 0.48 | 1.35 | | | 1.35 | | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | | | | | | | | | | | | |
| 3.4 | | | | 0.64 | | | | | | | 0.64 | | | 0.64 | |
| 3 | | Ընդամենը | | 14.78 | 0.95 | 0.48 | 12.71 | | | 12.71 | 0.64 | | | 0.64 | |
| 4.1 | 4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր | էներգետիկայի | | 1.39 | | | 1.39 | | | 1.39 | | | | | |
| 4.2 | | կապի | | 0.19 | | | 0.19 | | | 0.19 | | | | | |
| 4.3 | | տրանսպորտի | | 17.28 | | | 6.25 | | | 6.25 | 11.03 | | | 11.03 | |
| 4.4 | | կոմունալ ենթակառուցվածքների | | 8.06 | 0.06 | | 8.00 | | | 8.00 | | | | | |
| 4 | | Ընդամենը | | 26.92 | 0.06 | | 15.83 | | | 15.83 | 11.03 | | | 11.03 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր | բնապահպանական | | 62.17 | | | | | | | 62.17 | | | 62.17 | |
| 5.1.1 | | այդ թվում՝ արգելոցներ | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | արգելավայրեր | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային պարկեր | | 62.17 | | | | | | | 62.17 | | | 62.17 | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | | | | | | | | | | | | |
| 5.4 | | պատմական և մշակութային | | 30.75 | | | 6.50 | | | 6.50 | 24.25 | | | 24.25 | |
| 5 | | Ընդամենը | | 92.92 | | | 6.50 | | | 6.50 | 86.42 | | | 86.42 | |
| 6 | 6. Հատուկ նշանակության հողեր | Ընդամենը | | 35.61 | | | | | | | 35.61 | | | 35.61 | |
| 7.1 | 7. Անտառային հողեր | անտառ | | 583.07 | | | | | | | 583.07 | | | 583.07 | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | 583.07 | | | | | | | 583.07 | | | 583.07 | |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | 5.88 | | | | | | | 5.88 | | | 5.88 | |
| 8.2 | | ջրամբարներ | | 0.57 | | | 0.57 | | | 0.57 | | | | | |
| 8.3 | | լճեր | | | | | | | | | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | 1.36 | | | 1.36 | | | 1.36 | | | | | |
| 8.5 | | հիդրոտեխ. և ջրատնտ. այլ օբ. | | | | | | | | | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 7.81 | | | 1.93 | | | 1.93 | 5.88 | | | 5.88 | |
| 9.1 | 9. Պահուստային հողեր | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի հողեր | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9) | | | 2702.47 | 856.593 | 17.42 | 1098.897 | | 23.74 | 1075.157 | 729.56 | 3.71 | | 725.85 | |

Համայնքի ղեկավար ______________ /ստորագրություն, կնիք/ կատարող ______________ /ստորագրություն/

Հավելված 2

# ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՆ

| [illegible] | [illegible] | ԸՍՏ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ: ՍԵՓԱԿԱՆ | | | ՎԱՐՉԱԿԱԼԱԿԱՆ | ԸՍՏ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ | | | | | ԸՍՏ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ | | | | | ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ | | | | | [illegible] /ՀՀ դրամ/ | [illegible] /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Սեփականատերեր | Իրավաբանական ոչ պետական անձ | [illegible] | [illegible] | ջրովի վարելահող | անջրդի վարելահող | խաղող | խոտհարք | արոտ | ջրովի վարելահող | անջրդի վարելահող | խաղող | խոտհարք | արոտ | ջրովի վարելահող | անջրդի վարելահող | խաղող | խոտհարք | արոտ | | |
| | արոտ 1-ին կարգ | | | | | | | | | 247,7 | | | | | 45,66 | | | | | 202,04 | | |
| | այլ հողատ. | 0,53 | | | | | | | | | | | | | | | | | | | 425 | |
| | 2-րդ կարգի ջր. վարել. | 0,28 | | | | 5,0 | | 1,73 | 54,83 | | 4,75 | | 1,73 | 8,5 | | 0,25 | | | 46,33 | | 2839 | 190975 |
| | 3-րդ կարգի անջրդի վարել | 152.02 | | | | 11,0 | 27,54 | 20,02 | | | 10,76 | 18.54 | 20,02 | | | 0,24 | 9.0 | | | | 861953 | 785207 |
| | 4-րդ կարգի անջրդի վարել | 209,416 | | | | | 98,77 | | | 294,04 | | 25,46 | | | 285,60 | | 73,31 | | | 8,44 | 826146 | 133665 |
| | 5-րդ կարգի անջրդի վարել | 223,287 | | | | | 82,86 | | | | | 16.42 | | | | | 66,44 | | | | 358375 | 43102 |
| | 4-րդ կարգի խոտհարք | 72.00 | | | | | | | | | | | | | | | | | | | 178200 | |
| | տնամերձեր | 193,93 | | | | | | | | | | | | | | | | | | | 2420078 | |
| | այգեգործ | 0.26 | | | | | | | | | | | | | | | | | | | 8580 | |
| | հասարակական | | 2.87 | | | | | | | | | | | | | | | | | | 35815 | |
| | արտադրակ. | 4,02 | 14.07 | | | | | | | | | | | | | | | | | | 225747 | |
| Ար 5 | գյուղատնտ | 0,85 | 0.48 | | | | | | | | | | | | | | | | | | 16597 | |
| | ավտոտ և այլ շինութ | | | | 0.155 | | | | | | | | | | | | | | | | 19093 | 775000 |
| հատուկ | խանութ-կրպակ | | | | 1.28 | | | | | | | | | | | | | | | | 37188 | 1280000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 856.593 | 17.42 | | 1.435 | 16.0 | 209.170 | 21.75 | 54.83 | 541.74 | 15.51 | 60.42 | 21.75 | 8.5 | 331.26 | 0.49 | 148.75 | | 46,33 | 210.48 | 4991036 | 1152949 / 2055000 |

Հավելված 3

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ 1 ՀԵԿՏԱՐԻ ՀԱՇՎՈՎ

| ՀՈՂԻ ԿԱՐԳԸ | ՎԱՐԵԼԱՀՈՂ | | ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐ | ԽՈՏՀԱՐՔ | ԱՐՈՏ |
|---|---|---|---|---|---|
| | ՋՐՈՎԻ | ԱՆՋՐԴԻ | ԽԱՂՈՂ | | |
| | | | | | 7095 |
| II | 18900 | | 30000 | 5800 | |
| III | 14700 | 6825 | 25000 | 5000 | |
| IV | | 5250 | | 5000 | 2370 |
| V | | 2625 | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. 0267 2-10-81

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 39-Ա

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 4 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀՆԵՐԸ, ԵՎ 3 ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով, և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է

1.Մաշտոցի 90/6 հասցեում գտնվող 20.5 քմ մակերեսով առևտրի սրահը 202950 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 10.25 քմ մակերեսով հողամասը, 8303 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լիդա Իլիազի Կանեսյանին:
2.Մաշտոցի 13/3 հասցեում գտնվող 79.4 քմ մակերեսով օժանդակ շինությունը 174680 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 44,5 քմ մակերեսով հողամասը, 36045 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վալոդյա Մելիքյանին:
3.Մաշտոցի 90/3 հասցեում գտնվող 50 քմ մակերեսով օժանդակ շինությունը 110000 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 50քմ մակերեսով հողամասը, 40500 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հայկասար Բաղալյանին:
4.Մաշտոցի 13/21 հասցեում գտնվող 74.9 քմ մակերեսով օժանդակ շինությունը 164780 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 49.5 քմ մակերեսով հողամասը, 40095 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վիկտոր Զումշուդի Թադևոսյանին:
5.Մաշտոցի 81/4 հասցեում գտնվող 5.8 քմ մակերեսով առևտրի սրահը 57420 դրամով և նրա զբաղեցրած 5.3 քմ մակերեսով հողամասը, 4698 դրամով, օտարել Մարտիրոս Մկրտչյանին:
6. Մաշտոցի 81/18 հասցեում գտնվող 2.42 քմ մակերեսով առևտրի սրահը 23958 դրամով և նրա զբաղեցրած 2.42 քմ մակերեսով հողամասը, 1960 դրամով, օտարել Մարինե Թումանյանին:
7.Մաշտոցի 84/14 հասցեում գտնվող 10.5 քմ մակերեսով առևտրի սրահը 103950 դրամով և նրա զբաղեցրած 10.5 քմ մակերեսով հողամասը, 8505 դրամով, օտարել Ալբերտ Բաղալյանին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. 0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 40-Ա

## ԲԵՐԴ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑԻ 16 ԵՎ ԽՈՐԵՆԱՑԻ 28/4 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է

1. Բերդ քաղաքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող Խորենացու 16 հասցեի 288 քառակուսի մետր մակերեսով կիսակառույցը և նրա պահպանման և սպասարկման 500 քառակուսի մետր մակերեսով հողամասը օտարել աճուրդով: Աճուրդի մեկնարկային գինը սահմանել 565000 դրամ:

2.Բերդ քաղաքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող Խորենացու 28/4 հասցեի կիսակառույցը և նրա զբաղեցրած 192 քառակուսի մետր մակերեսով հողամասը օտարել աճուրդով: Աճուրդի մեկնարկային գինը սահմանել 276000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@majl.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 41-Ա

## ԲԵՐԴ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՎՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ,,ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ -ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ,, ՊՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, 51-րդ հոդվածի 5-րդ պարբերության, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով Բերդ քաղաքային համայնքի տարածքում գտնվող հուշարձանախումբը /,, Տավուշ,, ամրոցը եկեղեցիով, 10-14-րդ դդ. ամրոց գյուղատեղի ,,Հին բերդ,, , մ.թ.ա. 1-ին հ. գերեզմանոցը խաչքարերով/ արգելոց-թանգարանի վերակազմակերպման գործընթացի, համայնքի պատմությունն արտացոլող մշակութային ժառանգության ուսումնասիրման, օգտագործման և հանրահռչակման, համայնքի մշակութային կյանքի ակտիվացման, զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունը և հիմք ընդունելով ՀՀ մշակույթի նախարարության ,,Պատմամշակութային արգելոց – թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն,, պետական ոչ առևտրային կազմակերպության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N1-768 գրությունը

**համայնքի ավագանին որոշում է**

1.Տալ համաձայնություն Բերդ քաղաքային համայնքին պատկանող Սարալանջի 67 հասցեում գտնվող 5936700 /հինգ միլիոն ինն հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով 290 քմ ընդհանուր մակերեսով շենքը /այսուհետ՝ Շենք/ և նրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 4150 քմ ընդհանուր մակերեսով հողամասը, ծածկագիրը՝ 11-002-0165, բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս, անհատույց, անժամկետ և տնօրինման իրավունքով

հանձնել ՀՀ մշակույթի նախարարության ,,Պատմամշակութային արգելոց –թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն,, պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Համայնքի պատմությունն արտացոլող թանգարանային առարկաները (այսուհետ՝ ,,Հավաքածու,,) ըստ հավելվածի նվիրաբերել ՀՀ մշակույթի նախարարության ,,Պատմամշակութային արգելոց – թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն,, պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3.Բերդի քաղաքապետի և ,,Պատմամշակութային արգելոց –թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն,, պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքվող Շենքի, Հողամասի և Հավաքածուի նվիրաբերության պայմանագրով սահմանել նվիրառու կազմակերպության հետևյալ պարտավորությունները.

1)թանգարանի շենքն օգտագործել ըստ նշանակության,

2)համալրել թանգարանի հավաքածուները և նպաստել նրա զարգացմանն ու հանրահռչակմանը:

4.Բերդի քաղաքապետի և ,,Պատմամշակութային արգելոց –թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն,, պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքվող Շենքի, Հողամասի և Հավաքածուի նվիրաբերության պայմանագրի կնքման և պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնել նվիրառու կազմակերպության միջոցների հաշվին:

5.Շենքի, Հողամասի, Հավաքածուի հանձնման-ընդունման աշխատանքները կատարել սահմանված կարգով և այն ավարտել մինչև 2012 թվականի դեկտեմբերի 28-ը:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան